ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-057-07.07.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ

ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	Պատգամավոր Էդմոն Մարուքյան	13-րդ հոդված	Հանել Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ ոչ բոլոր փաստաբանները հնարավորություն ունեն միանգամից վճարելու ողջ տարվա համար նախատեսված անդամավճարի գումարը, ավելին՝ կարող են առաջանալ վերադարձման հիմքեր, օրինակ՝ արտոնագրի գործողությունը տարվա կեսից կասեցնելու դեպքում, և այդ ժամանակ ավելորդ անգամ փաստաբանը պետք է դիմի՝ հետ ստանալու համար իր կանխավճարը:	
2	Պատգամավոր Էդմոն Մարուքյան	23-րդ հոդված	Նախագծի 23-րդ հոդվածի 4-րդ կետը հանել նախագծից, քանի որ արտոնագիրը կասեցրած փաստաբանը՝ անկախ այն հանգամանքից, թե կասեցումը եղել է որոշակի թե անորոշ ժամկետով, չի օգտվում փաստաբանների պալատի որևէ ծառայությունից, չունի պալատի ղեկավար մարմինների ձևավորմանը մասնակցելու իրավունք և առավել ևս փաստաբանական գործունեություն չի	

			իրականացնում ու ըստ այդմ շահույթ չի ստանում նման գործունեությունից, հետևաբար չպետք է վճարի փաստաբանների պալատի անդամավճար:	
3	Պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան, Շուշան Սարդարյան, Էդմոն Մարուքյան, Ռուստամ Մախմուդյան	Հոդված 26, 1-ին մաս	1) 1-ին եւ 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ. ~~«1. Կարգապահական վարույթի գործը փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը նախապատրաստում են փաստաբանների պալատի աշխատակազմի համապատասխան աշխատողները (այսուհետ՝ գործը նախապատրաստող անձ), որոնց թվաքանակը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը: Գործը նախապատրաստող անձանց փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ նշանակում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ երկու տարի ժամկետով: Գործը նախապատրաստող անձանց լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել փաստաբանների պալատի նախագահի առաջարկությամբ փաստաբանների պալատի խորհրդի կողմից:~~ ~~2. Կարգապահական վարույթի գործերի բաշխումը գործը նախապատրաստող անձանց միջեւ կատարվում է փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված կարգով:».~~	
4	Պատգամավոր Էդմոն Մարուքյան	29-րդ հոդված	Նախագծի 29-րդ հոդվածով որպես լրացում առաջարկվող արտոնագրի գործողության դադարեցման՝ անդամավճարը չվճարելու հիմքերը հանել նախագծից, քանի որ փաստաբանը շատ երկար ժամանակ, գիտելիք ու միջոցներ	

			է ծախսում փաստաբան դառնալու համար, և նման հիմքի նախատեսումն արդարացի չէ նրա նկատմամբ. չվճարման պատճառները կարող են տարբեր լինել՝ ֆինանսական ժամանակավոր դժվարություններից մինչև ուղղակի մոռացության մատնվելը: Առաջարկում եմ 3 ամսվա անդամավճարի պարտավորության կուտակման դեպքում փաստաբանին ուղարկել հիշեցում:	